ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«22» օգոստոսի 2018 թվականի Ն 170

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Գ.Միրիջանյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Ձեզ է ներկայացվում 2018 թվականի օգոստոս ամսին Հացիկ համայնքի ղեկավարի կողմից արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները:

Նշված ժամանակահատվածում ընդունվել է 2 որոշում և արձակվել է 2 կարգադրություն:

Առդիր 7 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

22.08.2018թ.
գ. Հացիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«13» օգոստոսի 2018 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 50

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը և Արման Վաղինակի Ավետիսյանի դիմումը

Որոշում եմ

1. Քաղաքացի Արման Վաղինակի Ավետիսյանին ըստ ժառանգության իրավունքի պատկանող բնակելի տանը՝ (ծածկագիր 04-058-008-025-001) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 6-րդ փողոց փողոց 4 շենք 2 բնակարան:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

գ. Հացիկ 13.08.2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«13» օգոստոսի 2018 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 51-Ա

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N4-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով մարզպետի 01.08.2018թ-ի թիվ 01/07.1/3282-18 գրությունը

Որոշում եմ

1. ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N4-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշմամբ հաստատված N1-N7 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N1-N7 հավելվածների:
2. ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ղեկավարի 2015 թվականի օգոստոսի 21-ի N50-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

Գ. Հացիկ 13.08.2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«13 » օգոստոսի 2018 թվականի N 9

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի մարզի Հացիկ համայնքում 2018 թվականի օգոստոսի 10-ին տեղացած կարկուտի պատճառած վնասի չափը որոշելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ (Ֆ. Վարդանյան) սեղմ ժամկետում ուսումնասիրել կարկտահարված տարածքները և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

Գ.Հացիկ
13.08.2018թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
Արմավիրի մարզի Հացիկ համայնքի
ղեկավարի 2018թվականի օգոստոսի 13-ի
թիվ 9 կարգադրության

ԿԱԶՄ

Արմավիրի մարզի Հացիկ համայնքում 2018 թվականի օգոստոսի 10-ին տեղացած կարկուտի պատճառած վնասի չափը որոշող հանձնաժողովի

Հանձնաժողովի նախագահ Ֆ. Վարդանյան /համայնքի ղեկավարի տեղակալ/
Հանձնաժողովի անդամներ Ա. Ասատրյան /աշխատակազմի առաջատար մասնագետ/
Պ. Մարտիրոսյան /ավագանու անդամ/
Վ.Արզումանյան /հողասեփականատեր/
Հ. Ստեփանյան /հողասեփականատեր/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

17 օգոստոսի 2018 թվականի N 10

2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 15.08.2018թվականի թիվ 01/07.1/3731-18 գրությունը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Կազմել 2018 թվականի սեպտեմբերի 08-ին նախատեսվող համապետական շաբաթօրյակի կազմակերպման և իրականացման գործողությունների պլան՝ համաձայն հավելված 1-ի :
2. Շաբաթօրյակի իրականացման աշխատանքներին մասնակից դարձնել համայնքում գործող համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցներին, կրթական հաստատության աշխատակիցներին և աշակերտներին, մասնավոր ընկերություններին:
3. Կազմել շաբաթօրյակի կազմակերպման քարտեզ՝ համաձայն հավելված 2-ի:
4. Շաբաթօրյակին ներգրավել համայնքի բնակիչներին պատկանող երկու բեռնատար ԶԻԼ 157 , մեկ տրակտոր կցասայլակով և մեկ բեռնող տրակտոր:
5. Հավաքված աղբը տեղափոխել համայնքի աղբավայր:
6. Ապահովել շաբաթօրյակի աշխատանքների լուսաբանումը՝ լուսանկարել և տեղադրել համայնքի պաշտոնական կայքում:
7. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ
17.08. 2018թ.

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Հացիկ համայնքի
ղեկավարի 2018թվականի օգոստոսի 17-ի
թիվ 10 կարգադրության

2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Համայնքի մաքրվող տարածքները՝

1. Հացիկի համայնքապետարանի տարածք
2. «Հացիկի Ավ.Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տարածք
3. Հացիկ համայնքում գործող խանութների տարածքներ
4. Հացիկ համայնքում գործող ավտոտեխսպասարկման տարածք
5. Համայնքի 16-րդ փողոցի տարածք :

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Հացիկ համայնքի
ղեկավարի 2018թվականի օգոստոսի 17-ի
թիվ 10 կարգադրության

2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ
ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ
ՔԱՐՏԵԶ

1. Հացիկի համայնքապետարանի տարածք. հասցե 16 փողոց 1 շենք /պատասխանատու համայնքի ղեկավար Ա.Եղիազարյան/
2. «Հացիկի Ավ.Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տարածք. հասցե 1-ին փողոց 26 շենք /պատասխանատու տնօրեն Տ.Մկրտչյան/
3. Հացիկ համայնքում գործող խանութների տարածքներ /պատասխանատու Ա/Ձ տնօրեններ/
4. Հացիկ համայնքում գործող ավտոտեխսպասարկման տարածք /պատասխանատու Ա.Իսկանդարյան/
5. Համայնքի 16-րդ փողոցի տարածք /պատասխանատու Է.Վարդանյան/